ՀՀ ԿԳՆ «ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 23.02.2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 26.2 ՈՐՈՇՄԱՄԲ ՍՏԵՂԾՎԱԾ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

Շիրակի պետական համալսարանի «Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի» «Պատմության և փիլիսոփայության» ամբիոնի վարիչի ԺՊ, դոցենտ Հովհաննես Գեորգիի Խորիկյանի և նույն ամբիոնի դասախոս Գագիկ Լևոնի Համբարյանի կողմից ՇՊՀ գիտական խորհրդի կողմից 30.01.2017թ.-ի նիստում հաստատված «Էթիկայի սկզբունքներով» սահմանված էթիկայի սկզբունքների խախտման վերաբերյալ

Գյումրի 12.03.2018թ.

ՀՀ ԿԳՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 23.02.2018թ.-ի թիվ 26.2 որոշմամբ ստեղծված էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)՝ հետևյալ կազմով՝ Խաչատրյան Վալերի Գրիգորի՝ պրոֆեսոր, ՇՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ (հանձնաժողովի նախագահ), Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆոսոր, ՇՊՀ անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր (հանձնաժողովի քարտուղար), Սերոբյան Երվանդ Սերյոժի՝ ՇՊՀ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ (հանձնաժողովի անդամ), Հակոբյան Լիզա Հելբերտի՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՇՊՀ մանկավարժության ամբիոնի դոցենտ (հանձնաժողովի անդամ), Չարչողլյան Արթուր Էդվարդի՝ ՇՊՀ «Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի» «Պատմություն» բաժնի 2-րդ կուրսի ուսանող, ՇՊՀ ՈՒԽ նախագահի տեղակալ,

համաձայն ՇՊՀ գիտական խորհրդի կողմից 30.01.2017թ.-ի նիստում հաստատված «Էթիկայի սկզբունքների» (այսուհետ՝ սկզբունքներ), ուսումնասիրելով Շիրակի պետական համալսարանի «Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի» «Պատմության և փիլիսոփայության» ամբիոնի վարիչի ԺՊ, դոցենտ Հովհաննես Գեորգիի Խորիկյանի և նույն ամբիոնի դասախոս Գագիկ Լևոնի Համբարյանի կողմից վերջին 5-6 ամսում սոցիալական ցանցերում կատարված գրառումները, հրապարակային ելույթներն ու կոչերը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը (ՀՀ ԿԳ նախարարության եզրակացությունը, ԱԻՆ և Քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից տրված եզրակացությունը, ՇՊՀ ռեկտորի պարզաբանումներն ու հիմնավորումները և այլն),

ՊԱՐԶԵՑ

Շիրակի պետական համալսարանի «Սոցիալական գիտությունների իրավունքի ֆակուլտետի» «Պատմության և փիլիսոփայության» ամբիոնի վարիչի ԺՊ,դոցենտ Հովհաննես Գեորգիի Խորիկյանը և նույն ամբիոնի դասախոս Գագիկ Լևոնի Համբարյանը վերջին 5-6 ամսում սոցիալական ցանցերում, ԶԼՄ-ներին տված հարցազրույցներում և հրապարակային ելույթներում հանդես են եկել բազմաթիվ հրապարակումներով, որոնք վերաբերում են Շիրակի պետական համալսարանին:

Հրապարակումների ուսումնասիրությունից հանձնաժողովը հանգեց այն եզրակացության, որ դրանցում առկա են

1.1. **Մի շարք չհիմնավորված փաստեր.** մասնավորապես http://www.aravot.am/2017/09/25/909444/ սեպտեմբերի 25-ի համարում առանց հիմնավորող փաստեր ներկայացնելու նրանք նշել են, որ (բառացի մեջբերվում է) *«բուհը նախկին ռեկտորից ժառանգել է 500 միլիոն ՀՀ դրամ, որ ռեկտորը իր բարեկամ-մտերիմների համար նշանակել է հսկայական աշխատավարձեր, որոնք բուհական համակարգից անչափ հեռու են: Համալսարանի ուսանողներին բարձր աշխատավարձով նշանակել է այս կամ այն հաստիքին, որոնք աշխատանքային ոչ մի հմտություն չունեն: 2500 ուսանող ունեցող բուհում ռեկտորի մտերիմները ոչ մի բան անելու համար ստանում են 300 000-400 000 դրամ»:*

Հանձնաժողովը ՇՊՀ-ի ֆինանսական վերլուծությունների և հաշվապահական հաշվառման ու ծրագրավորման բաժնից ստացած տեղեկանքի արդյունքում պարզել է, որ բուհի հաշվեկշռին 2016 թվականի հուլիս ամսվա դրությամբ եղել է ոչ թե 500 միլիոն, այլ 394.779.534 ՀՀ դրամ: Ավելին՝ հանձնաժողովի կարծիքով այն միտքը, թե ռեկտորի մտերիմները «ոչ մի բան անելու համար ստանում են 300-400 հազար ՀՀ դրամ» աշխատավարձ, կտրականպես անիրական է և հանրության առաջ զցում է բուհի վարկանիշը: Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ հրապարակմամբ խախտվել են «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1. և «Ազնվության» սկզբունքի 1.2.6. կետերը:

1.2. Սեպտեմբերի 25-ին արված գրառման մեջ (http://www.aravot.am/2017/09/25/909615/) Գագիկ Համբարյանը հայտարարել է, որ (բառացի մեջբերվում է) *«ռեկտորի առաջին հանցագործությունն այն է, որ մինչև հիմա ոչ մի դասախոս պայմանագիր չի կնքել ինստիտուտի հետ, և իրենք, փաստորեն, ապօրինի են աշխատում, մինչդեռ ՀՀ-ում ոչ մի այդպիսի բուհ չկա »:*
Հանձնաժողովը գտնում է, որ պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների հետ կնքված աշխատանքային պայմանագրերը լուծված չեն եղել, հետևաբար, համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 5-րդ մասի, պայմանագրերը համարվել են անորոշ ժամկետով կնքված:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ գրառման մեջ խախտվել են «Ազնվության» սկզբունքի 1.2.6. և «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1. կետերը:

1.3. Հոկտեմբերի 2-ի գրառման մեջ էլ *(http://operativ.am/?p=244275&l=am)* Գ. Համբարյանը նշում է,որ (բառացի մեջբերվում է) *«Ակամայից հիշեցի Շիրակի Մայր բուհում ակտիվ ընթացող շինարարությունը և այն գումարները, որոնք ծախսվում են այդ ամենի վրա: Օրինակ՝ բուհի բուֆետի թեթև վերանորոգման համար համալսարանի բյուջեից ծախսվել է 25 միլիոն դրամ, իսկ դահլիճի վերանորոգման համար՝ 100 միլիոնից ավել դրամ: Հետաքրքիր է ստացվում... Երկհարկանի քարուքանդ եղած շենքին նոր կյանք տալու համար Գյումրու քաղաքապետարանը ծախսում է ընդամենը 32 միլիոն դրամ, իսկ փոքրիկ բուֆետի վերանորոգման համար ծախսվում է 25 միլիոն դրամ»:*

Հանձնաժողովը գտնում է, որ բուհի բուֆետը ոչ թե թեթև վերանորոգվել է, այլ հիմնանորոգվել է, տեղադրվել են ժամանակակից սարքավորումներ: Ինչ վերաբերում է վերանորոգման գումարին, ապա ՇՊՀ-ի ֆինանսական վերլուծությունների և հաշվապահական հաշվառման ու ծրագրավորման բաժնից ստացած տեղեկանքից պարզ է դառնում, որ 2017թ.-ին ՇՊՀ-ում կատարված շինարարական աշխատանքները, ըստ պայմանագրերի, ընդգրկում են դահլիճի և բուֆետի հիմնանորոգումները, «Բանականության բանալի» ակումբի (ներառյալ՝ խոհանոցը) կառուցումը, գրադարանին կից խորհրդատվական և «Նորկենտ» ծրագրին տրամադրված սենյակների վերանորոգումները, կաթսայատան հին կաթսաները նորերով փոխարինելը, ինչպես նաև ուսումնական մասնաշենքի տանիքի մասնակի վերանորոգումը: Այս աշխատանքների ընդհանուր գումարը կազմում է 95.947.406 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ հրապարակման մեջ խախտվել են «Ազնվության» սկզբունքի 1.2.6. և «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1. կետերը:

1.4. Հոկտեմբերի 2-ի գրառումով էլ (http://blog.mediamall.am/?id=73895) հայտարարում են, որ (բառացի մեջբերվում է) *«Գրադարանից դուրս է բերվել 15 տոննա գիրք, որը կազմակերպվել է երկու փուլով... Գրքերն ամեն անգամ դուրս են բերվել երկուական բեռնատարներով...»:* Հրապարակվել են լուսանկարներ, որոնցում արտացոլված չէ գրքերի հստակ քանակը: ԿԳՆ-ի կողմից ՇՊՀ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմված հաշվետվությանից պարզ է դառնում, որ գրքերը չեն արտացոլվել բուհի հաշվեկշռում, գնահատված և հաշվառված չեն եղել, ավելին՝ բուհի աշխատակիցները հանձնաժողովին տված բանավոր բացատրություններում հայտնել են՝ գրքերը ֆիզիկապես գտնվել են վատթար վիճակում:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ հրապարակման մեջ ևս խախտվել են «Ազնվության» սկզբունքի 1.2.6., «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1. և «Վստահության» սկզբունքի 1.6.2. կետերը :

1.5. Սեպտեմբերի 25 գրառումով էլ http://www.armtimes.c(om/hy/article/121300) Խորիկյանը հայտարարում է, որ (բառացի մեջբերվում է) *«Վերջապես պատասխանեց... ՇՊՀ ռեկտորի առաջին «դաժան» հաշվեհարդարը Հովհաննես Խորիկյանի նկատմամբ հնազանդ գիտական խորհրդի կողմից ամբիոնի վարիչի*

պաշտոնում անվստահություն հայտնելն է: Նախ՝ ես հրամանով մինչև նոյեմբեր պաշտոնակատար եմ, այսինքն՝ գիտխորհրդի կողմից ընտրված չէի, որ անվստահություն հայտնեին, երկրորդ՝ գիտական խորհրդի անդամ ինձ ընտրել էր ֆակուլտետի խորհուրդը: Սա է համալսարանի գործունեությունը...պատժել, պատժել...»:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ գրառման պատճառով մի խումբ ուսանողներ հայտարարել են դասադուլ՝ պահանջելով վերականգնել Հ. Խորիկյանին ամբիոնի վարիչի ԺՊ-ի պաշտոնում: Արդյունքում խախտվել են դասապրոցեսները, և բուհը հայտնվել է անհարկի շահարկումների կենտրոնում: Գիտական խորհուրդն ընդամենը հայտնել է իր դիրքորոշումը Հ. Խորիկյանի նկատմամբ անվստահություն դրսևորելու միջոցով, որի իրավունքը ուներ ինչպես գիտական խորհուրդը, այնպես էլ նրա յուրաքանչյուր անդամը: Հ. Խորիկյանը փաստորեն տարածել է ստահոդ լուրեր, և հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ գրառմամբ խախտվել են «Ազնվության» սկզբունքի 1.2.6. և «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1. կետերը:

1.6. Գ. Համբարյանը և Հ. Խորիկյանը 03.02.2018թ.-ին բաց նամակով դիմել էին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանին և ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահ Նարեկ Սարգսյանին (http://www.iravunk.com/news/49640): Նամակում ասվում է, որ (բառացի մեջբերվում է) «*Շիրակի պետական համալսարանի ռեկտոր Սահակ Մինասյանի շինարարական գործունեության հետևանքով համալսարանի ուսանողությունը և աշխատակիցները հայտնվել են խիստ վտանգավոր իրողության առջև: Տեխնածին կամ բնական արտակարգ իրավիճակների արդյունքում համալսարանում կարող են մեծաթիվ զոհեր լինել: Համալսարանի առաջին հարկում գտնվող վերանորոգված աղմկահարույց 118 միլիոն դրամանոց դահլիճի մաս կազմող «Բանականության բանալի» ինտելեկտուալ ակումբը տեղակայվել է դահլիճի նախամուտքում, որը վերանորոգման արդյունքում մոտ 4-5 մետր առաջ է եկել, ինչպես նաև ընդարձակվել է դեպի աջ՝1,5-մետրանոց անցում թողնելով դեպի կենտրոնական երկրորդ շքամուտք կամ ելքի դռներ, այսինքն՝ շենքից տարհանվելու հնարավորությունը բացառված է: Հայաստանը գտնվում է ակտիվ սեյսմիկ գոտում, իսկ Գյումրին՝ առավել ևս: 1926 և 1988 թթ. երկրաշարժերի ժամանակ գրեթե ամբողջությամբ ավերված քաղաքը դեռ համարվում է աղետի գոտի: Բոլոր նորմալ մարդիկ արտակարգ իրավիճակների ժամանակ մեծ ուշադրություն են դարձնում շենք-շինություններից մարդկանց տարհանման կազմակերպմանը... Հայաստանյան բոլոր հիմնարկությունների և կրթօջախների տեսանելի վայրերում փակցված են այդ շենք-շինություններից տարհանման մանրամասն պլանները... Սակայն այդ ամենը չի վերաբերում Սահակ Մինասյանի ղեկավարած բուհին... Տարհանման պլանները շատ վաղուց «տարհանվել» են, իսկ պարոն Մինասյանն էլ, անհայտ թույլտվության արդյունքում համալսարանի շենքում շինարարություն է արել և անում է, որն առաջին իսկ հայացքից աչքի է ընկնում հակաօրինականությամբ, քանի որ ոչ մի նորմալ*

գերատեսչություն թույլ չէր տա, որ ուսումնական հաստատության կենտրոնական մուտքերից մեկը բացահայտ փակվի, իսկ ուսանողների համար թողնվի 1,5-մետրանոց անցում... Արտակարգ իրավիճակների՝ երկրաշարժերի, հրդեհների և այլնի ժամանակ այդտեղ կստեղծվի խուճապ, քանի որ տարհանման համար ճանապարը շատ նեղ է: Կառաջանան մարդկային մեծ կուտակումներ, հրմշտոց, որի արդյունքում կկոտրվեն նաև պարոն Մինասյանի հպարտության առարկա հանդիսացող ապակյա պատերը՝ բոլոր բացասական հետևանքներով... Մեծաթիվ զոհերից հնարավոր չի լինի խուսափել... Հետաքրքիր է՝ ո՛վ է թույլ տվել ՇՊՀ ռեկտորին համալսարանի շենքում այդպիսի շինարարություն կազմակերպել...ԱԻՆ-ում կամ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեում տեղյա՞կ են ռեկտորի հակաօրինական գործունեությանը, որն ակնհայտ է անգամ ոչ մասնագետների համար... Քանի դեռ դահլիճի շքամուտքն իրոք մարդկանց մահվան պատճառ չի դարձել, կոչ ենք անում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը և քաղաքաշինության պետական կոմիտեին տեղում ուսումնասիրություններ կատարել և ուղղել շինարարական սխալները»:

Հանձնաժողովն ուսումնասիրել է 07.02.2018թ.-ի «Shabat.am» կայքի հրապարակած նյութը (https://shabat.am/am/article/167515/AIN-y-pataskhanum-e-Davit-Tonoyanin)՝ կապված ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության և ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի իրականացրած ուսումնասիրությունների հետ, (բառացի մեջբերվում է) *«ՀՀ ԱԻՆ Շիրակի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության և ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից տեղում ուսումնասիրվել է Գյումրի քաղաքի «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մասնաշենքի հիմնանորոգված հատվածը: Հիմնադրամի կողմից նախագծային փաստաթղթերի ուսումնասիրության և շահագործման հանձնելու վերաբերյալ դիմում ՀՀ ԱԻՆ հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը չի ստացել, քանի որ իրականացված հիմնանորոգման աշխատանքները շինարարության թույլտվություն չեն պահանջում: Տեղում նախնական ուսումնասիրությունից պարզվել է, որ ապակյա միջնապատերով տարածքի պարփակման արդյունքում տարահանման թվով երկու ելքերից մեկի առանձնացումը և միջանցքի մի հատվածի նեղացումը, որն արդյունքում կազմել է 205 սմ, տարհանմանը չի խոչընդոտում: Ինչ վերաբերում է տարհանման պլաններին, ապա նշեմ, որ համալսարանի ղեկավարությանը հանձնարարվել է դրանք լրամշակել և ներկայացնել ՀՀ ԱԻՆ հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն՝ համաձայնեցման»:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը գտնում է, որ Գ. Համբարյանն ու Հ. Խորիկյանը խախտել են «Ազնվության» սկզբունքի 1.2.6., «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1. և «Վստահության» սկզբունքի 1.6.2. կետերը: Ավելին՝ նմանաբովանդակ գրառումները խուճապ և հոգեկան անհանգստություն են առաջացնում բուհի աշխատակիցների , ուսանողների և վերջիններիս հարազատների

շրջանում. անհիմն շահարկվում է բուհի անունը՝ հարված հասցնելով բուհի վարկանիշին:

1.7. Գ. Համբարյանը և Հ. Խորիկյանը հայտարարել էին, որ կոպտորեն խախտվել էր բուհի կանոնադրությունը, քանի որ ֆակուլտետի դեկանին պետք է ընտրեր ոչ թե բուհի գիտական խորհուրդը, այլ ֆակուլտետի խորհուրդը: Գ. Համբարյանն իր ֆեյսբուքյան էջում կատարած գրառման մեջ, որը արտատպել էին նաև էլեկտրոնային մի քանի լրատվամիջոցներ, մասնավորապես հայտնում է (06.02.2018թ. http://araratnews.am/shiraki-pethamalsarani-khajnazarnereh/) (բառացի մեջբերվում է) *«2018 թ-ի փետրվարի 5-ին Շիրակի պետական համալսարանում տեղի ունեցան երկու ֆակուլտետների դեկանների թափուր պաշտոնների հավակնորդների թեկնածությունների քննարկում և զարգացման հնգամյա ծրագրերի ներկայացում: Ռեկտոր Սահակ Մինասյանը, անտեսելով համալսարանի կանոնադրությունը, դեկանների ընտրությունը չիրականացրեց ֆակուլտետների խորհուրդներում՝ հերթական անգամ ցույց տալով, որ ինքը վեր է բոլոր օրենքներից: Համալսարանի ցանկացած ներքին իրավական ակտի հիմքում պետք է լինի բուհի կանոնադրությունը, սակայն ռեկտորն առաջնորդվում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ֆակուլտետի դեկանի ընտրության (նոր խմբագրությամբ) կանոնակարգով (հաստատված 2017 թ. ապրիլի 11-ին), որտեղ նշված է, որ դեկանի ընտրությունը կազմակերպվում է գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, որը կոպտորեն խախտում է 2016 թ -ի սեպտեմբերի 22-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված բուհի կանոնադրությունը...*

ՇՊՀ կանոնադրության ոչ մի կետում նշված չէ, որ գիտական խորհուրդն է իրավասու ընտրելու դեկան կամ ամբիոնի վարիչ: 48.8. կետով գիտական խորհուրդը հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, դասախոսների և այլ ընտրովի պաշտոնների ընտրության կարգերը, իսկ 48.9. կետով շնորհում է գիտական կոչումներ, հաստատում ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները: Ինչպես տեսնում եք, համալսարանի գիտական խորհուրդը չի կարող դեկանների և ամբիոնների վարիչների ընտրություն իրականացնել: Կանոնադրության 98.3 կետով հստակ ամրագրված է, որ ֆակուլտետի խորհուրդը, սահմանված կարգի համաձայն, իրականացնում է ֆակուլտետի դեկանի ընտրությունը, այսինքն՝ դեկանի ընտրության վերոնշյալ կանոնակարգը չի բխում կանոնադրության պահանջներից: Կանոնադրության 102. կետում նշված է, որ ֆակուլտետի դեկանն ընտրվում է գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով:Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում ֆակուլտետի խորհրդում ամենաշատ, բայց առնվազն մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներ հավաքած թեկնածուն: Ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված դեկանին պաշտոնի է նշանակում ՇՊՀ-ի ռեկտորը և սահմանված կարգով կնքում է պայմանագիր՝ 5 տարի ժամկետով...

Այս փնթիության պատճառն այն է,որ բուհի կանոնադրությունը տարրական copy paste է, որը չի քննարկվել բուհի գիտխորհրդում և թաքուն ուղարկվել է կառավարության հաստատմանը...Հենց այս հանցագործությունը «մարսելուց» հետո էլ Սահակ Մինասյանն էլ ավելի անկառավարելի դարձավ և մինչև հիմա համոզված է,որ ինչ ուզում, անում է. կրթական գործի Կոլումբոսը վեր է կանգնած բուհի

կանոնադրությունից...
Ինձ համար,որպես Սոցիալական գիտությունների և իրավագիտության ֆակուլտետի խորհրդի անդամ,ով մասնակացում էր փետրվարի 5-ին վերը նշված ֆակուլտետի դեկանի ընտրության քննարկմանը, մեծ բացահայտում էր այն, որ երբ մենք բարձրաձայնեցինք, որ ռեկտորը կոպտորեն խախտում է բուհի կանոնադրությունը, ռեկտորի տեղակալներից մեկը հայտարարեց, որ կանոնադրության մեջ նշված է ոչ թե ֆակուլտետային խորհուրդ, այլ «ֆակուլտետային գիտական խորհուրդ»...Իսկ այն փաստի արձանագրմանը, որ մեր բուհի ոչ մի ֆակուլտետում այդպիսի կառույց չկա, ստացանք մի զավեշտալի պատասխան. «Այդ ֆակուլտետային գիտական խորհուրդներն ապագայի համար են...»:
Պարզվում է, բոլորը հիմար են, որ արդի օրենքներով են ապրում...ՇՊՀ-ում բուհի ներկա ողբերգալից վիճակը թողած ապագայի մասին են մտածում և կառավարությանն են հրամցրել մի կանոնադրություն, որը Շիրակի պետհամալսարանի ներկայի հետ կապ չունի...Այսպիսի անտրամաբանական պատասխան կարելի էր միայն լսել Սահակ Մինասյանի յուրայիններից, որոնք իրենց հերթին խայտառակ են անում ռեկտորին...
Ամբողջ աշխարհը պարզվում է հիմար է, ներկայով են ապրում և ներկայի վերաբերյալ օրենքներ ընդունում, իսկ մենք, մեր ներկան թողած, ապագայի մասին ենք մտածում՝ համապատասխան որոշումներ կայացնելով... Խորապես համոզված եմ եղել, որ Սահակ Մինասյանի նման «մտքի տիտանի» համար ՇՊՀ-ը շատ փոքր տեղ է...Նրա տեղը ԱԺ-ն է, որտեղ ապագայի մասին մտածելով և գուշակելով՝ Սահակ Նոստրադամուսյանը օրինագծեր կառաջադրեր... Օրինակ՝«Երկրայինների և այլմոլորակայինների ամուսնության մասին օրենքը» կամ «Անօդաչու թռչող սարքերի և թռչող մեքենաների վթարներից խուսափելու մասին» օրինագիծը...Ի՞նչ կա որ... Սակայն ապագայի մասին բարձրաձայնող մասնակիցը հետագայում խայտառակվեց...Շատ արագ բացահայտվեց, որ բուհի կանոնադրության մեջ առկա է ընդամենը «ներկան», ըստ որի՝ դեկաններին ընտրելու են ֆակուլտետային խորհուրդները...Սակայն Սահակ Մինասյանի յուրայինները, անտեսելով բուհի կանոնադրությունը, որոշում են կայացրել, որ իրենց տիրոջ բեսպրեդելությունը մինչև վերջ են տանելու և ս.թ.փետրվարի 12-ին նշանակել են երկու ֆակուլտետների դեկանների ընտրություն՝ կոպտորեն խախտելով համալսարանի կանոնադրությունը...
ՇՊՀ-ում ստեղծված խայտառակ և բեսպրեդելային իրավիճակը սպասելի էր, քանի որ բուհական կրթության հետ աղերս չունեցող Սահակ Մինասյանը իրեն շրջապատել է իր պես անտեղյակներով, որոնք նույնիսկ ծանոթ չեն բուհի կանոնադրությանը և չեն էլ ցանկանում ծանոթանալ... Շիրակի պետհամալսարանում «քաջնազարների», մարտնչող անտեղյակության, տգիտության և բեսպրեդելության ժամանակաշրջան է, որը եթե չկանխվի, ապա բուհը վերջնականապես կկործանվի...»:

12.02.2018թ.-ին Հ. Խորիկյանը հայտարարել էր անժամկետ հացադուլ՝ կապված (իր և Գ. Համբարյանի բնորոշմամբ) ռեկտորի կողմից բուհի կանոնադրությունը կոպտորեն խախտելու հետ:

Հանձնաժողովը վերոնշյալ հարցի կապակցությամբ ուսումնասիրել է ՀՀ ԿԳ նախարարության պարզաբանումը՝ կապված ՇՊՀ-ում ֆակուլտետի դեկանի ընտրության կարգի հետ (http://www.asparez.am/shiraki-petakan-hamalsaran-hy-2/#.WqRO9h3FLIW), (բառացի մեջբերվում է) *«Բարձրագույն եւ հետբուհական*

մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Բարձրագույն ուսումնական հաստատությունը ինքնուրույն է որոշում բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, իրականացնում է աշխատողների ընտրությունը եւ բաշխումը, ներառյալ՝ գիտամանկավարժական կազմի համալրումը, պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական եւ ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը.»:
ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 1031-Ն որոշմամբ հաստատված Շիրակի պետական համալսարանի կանոնադրության 48-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված է, որ գիտական խորհուրդը հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, դասախոսների եւ այլ ընտրովի պաշտոնների, իսկ համաձայն 102-րդ կետի՝ Դեկանն ընտրվում է գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում ֆակուլտետի խորհրդում ամենաշատ, բայց առնվազն մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներ հավաքած թեկնածուն: Դեկանի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է ՇՊՀ գիտական խորհրդի կողմից՝ հաստատված դեկանների ընտրության կանոնակարգին համապատասխան:
Ղեկավարվելով օրենքի եւ կանոնադրության վերոնշյալ դրույթներով՝ 2017 թվականի ապրիլի 11-ի գիտական խորհրդի նիստում հաստատվել են «ՇՊՀ դեկանի ընտրության», «ՇՊՀ ամբիոնի վարիչի ընտրության» կանոնակարգերը, և մրցույթներն իրականացվել են այս կարգերին համապատասխան:
Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից առաջարկվել է բուհին վերանայել եւ հստակեցնել կանոնադրության և ներքին իրավական ակտերի տարբնթերցման տեղիք տվող դրույթները»:

Հանձնաժողովը, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում է՝ Գ. Համբարյանի և Հ. Խորիկյանի կողմից խախտվել են «Ազնվության» սկզբունքի 1.2.6., «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1. և «Վստահության» սկզբունքի 1.6.2. կետերը:

2. Հ. Խորիկյանը և Գ. Համբարյանը շատ դեպքերում թույլ են տվել վիրավորական արտահայտություններ ՀՀ ԿԳՆ-ի, բուհի Հոգաբարձուների խորհրդի, Գիտական խորհրդի և բուհի ղեկավարության հասցեին:

2.1. Գ. Համբարյանն իր գրառումներում անդրադարձել է նաև բուհի հոգաբարձուների խորհրդին՝ մեղադրելով՝ վերջինիս (իր բնորոշմամբ) ռեկտորի «ինքնագործունեությունը» խրախուսելու մեջ (http://armlife.am/news/20872.html), (բառացի մեջբերվում է) *«ՇՊՀ պաշտոնական կայքում չկա ռեկտորի 2016 թ-ի տարեկան հաշվետվությունը...Չկա 2017 թվականին նախատեսված նախահաշիվը, ավելին՝ չկան գնումների ամբողջ գործընթացն ապահովող հայտարարությունները... 2018 թ-ի ֆինանսական գործունեության ծրագիրը ևս չի քննարկում այս գիտխորհրդին, որը կազմակերպել է հեռահար ձևով, քանի որ վախենում է հարցադրումներից, որոնց պատասխանը չունի... Ռեկտորի այս ինքնագործունեությունը փաստորեն խրախուսվում է նաև հոգաբարձուների խորհրդի կողմից...»:*

Իսկ «armlife.am» կայքում 11.02.2018թ.-ին հրապարակված հոդվածում (http://armlife.am/news/26155.html) Գ. Համբարյանը հայտնում է, որ ռեկտորի (իր բնորոշմամբ) «կամայականությունները» և «ֆինանսական չարաշահումները» խրախուսվում են Հոգաբարձուների խորհրդի կողմից, (բառացի մեջբերվում է) «*2017 թ-ի սեպտեմբերի 25-ին ՀՀ նախագահին և վարչապետին ուղղված մեր բաց նամակից հետո անցել է ավելի քան 4 ամիս, սակայն զարմանալիորեն Շիրակի պետհամալսարանի հոգաբարձուների խորհուրդն այս ամիսների ընթացքում որևէ նախաձեռնություն չցուցաբերեց իրավիճակին տեղում ծանոթանալու և արձագանքելու ուղղությամբ: Խնդրին այն է, որ հոգաբարձուների խորհրդի նման պասիվ դիրքորոշումը կամա-ակամա ստիպում է մտածել, որ Սահակ Մինասյանի կամայականություններն ուղղակիորեն խրախուսվում էին և շարունակում են խրախուսվել հոգաբարձուների խորհրդի կողմից: Այսպես, ըստ ՇՊՀ կանոնադրության կետ 41-ի հետևյալ ենթակետերի, հոգաբարձուների խորհրդի իրավասություններն են՝ 10. ՇՊՀ-ի գործունեության, այդ թվում՝ ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը, ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի ընտրությունը, 18.քսան միլիոն դրամի կամ դրան համարժեք այլ արտարժույթի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի հաստատումը: Ժամանակին բարձրաձայնեցինք, որ ՇՊՀ 2016 թ-ի երկրորդ կեսի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն անցկացվում է մրցույթի պայմանների կոպիտ խախտումով, իսկ այն անցկացնողները ռեկտորի վաղեմի գործընկերներն է, հետևաբար ստացվում է, որ համաձայն կանոնադրության 10. ենթակետի՝ կամ հոգաբարձուների խորհուրդը տեղյակ չէ իր գործառույթներից և ռեկտորն ինքնակամ է ընտրում աուդիտորին, կամ էլ, ինչն առավել հավանական է, հենց հոգաբարձուների խորհուրդն է հովանավորում կրթական գործի Կոլումբոս Մինասյանին գործելու օրենքներից ու ընթացակարգերից վեր անձնական ցանկություններով և «օրինականորեն» կեղծելու աուդիտի արդյունքները... Սահակ Մինասյանի շինարարական գործունեությունը համալսարանի բյուջեին նստեց վիթխարի գումարներ, ինչի պատճառով ռեկտորը չի վճարում նախորդ կիսամյակի դասախոսական ժամավճարները և գիտական արդյունավետության համար տրվող հավելավճարները, վերացրեց ուսանողական գեղչերի տարիներ շարունակ գոյություն ունեցող արդյունավետ համակարգը: Փաստորեն, դատելով կանոնադրության 41.18. կետից՝ կարող ենք եզրակացնել, որ Մինասյանի ֆինանսական չարաշահումների անմիջական հովանավորը հոգաբարձուների խորհուրդն է, որը 15-րոպեանոց նիստերով հաստատում էր ռեկտորի ցանկությունները: Հնարավոր է արդյո՞ք մտածել, որ 20 միլիոնանոց պայմանագրերից հոգաբաձուների խորհուրդը տեղյակ չէ, հազիվ թե, քանի որ հակառակ դեպքում հոգաբարձուների խորհուրդը վաղուց արձագանքած կլիներ Մինասյանի խայտառակ գործունեությանը և հանրությանը կփորձեր համոզել, որ Մինասյանը չարաշահել է իր լիազորությունները: Փաստն այն է, որ հոգաբարձուների խորհուրդը ձկան պես լուռ է, հետևաբար վերջինս լռությամբ փորձում է հնարավորիս ստվերում մնալ և կուլիսներում պաշտպանել Մինասյանի*

շահերը, այսինքն՝ պաշտպանելով ռեկտորին, պաշտպանում է ինքն իրեն:Բազմաթիվ են տեղեկություններն այն մասին,որ գրեթե շաբաթը մի քանի անգամյա երևանյան «վոյաժների» ժամանակ հանցագործ ռեկտորը հանդիպում է հոգաբարձուների խորհրդի երկու անդամներին, իսկ բուհի աշխատակիցների ներկայությամբ բացահայտ խոսում է նրանց հետ հեռախոսով՝ ցույց տալով բոլորին, որ Բաղրամյան 26-ի հետ սերտ կապեր ունեցող այդ երկուսը նրա հովանավորներն են, ավելի ճիշտ՝ հանցագործության մեղսակիցները... Սահակ Մինասյանին ջանադրաբար պաշտպանողների այսպիսի պահվածքը ապացուցում է, որ բուհի 1 միլիոն դոլլարից ավելի գումարների փոշիացման մեջ ներգրավված են նաև այդ մարդիկ...Այլ կերպ չի կարելի բացատրել այդ անձանց լռելու փաստը և իբրև թե ծածուկ Մինասյանին պաշտպանելու հանգամանքը, որը վերջին շրջանում ավելի ցայտուն է և բացահայտ... ԱԺ-ում ինչ-որ գյուղացու կարիքների մասին վարչապետին պատին դեմ տվող պատգամավոր Ֆելիքս Ցոլակյանը, ով ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահն է, մինչև հիմա մի տառ չի արտահայտել ՇՊՀ-ում տիրող խայտառակ իրավիճակի և շարունակվող ապօրինությունների վերաբերյալ... Հետաքրքիր է, ի՞նչն է կաշկանդում արդար մարդու համբավ ունեցող Ցոլակյանին հանդիպելու մեզ հետ և լսելու իր նախկին ենթակայի հանցագործությունների մասին ապացույցները...»:

Հանձնաժողովը գտնում է, որ հոգաբարձուների խորհրդին ուղղված բնորոշումներն անհիմն են, և Գ. Համբարյանը վերոնշյալ հրապարակման մեջ խախտում է «Ազնվության» սկզբունքի 1.2.6., «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1., «Վստահության» սկզբունքի 1.6.2. և «Հարգանք այլոց նկատմամբ» սկզբունքի 1.5.2. կետերը:

2.2. 11.01.2018թ.-ին «fbnews.am» կայքում հրապարակված նյութում (http://fbnews.am/news/500258/mer-lyvovy-kg) Գ. Համբարյանը բուհի գիտական խորհրդին անվանել է «անձնական օգտագործման գիտխորհուրդ», (բառացի մեջբերվում է) «*Այդ գիտխորհուրդը Սահակ Մինասյանի անձնական օգտագործման գիտխորհուրդն է: Իրենք սխալների ուղղման վերաբերյալ քննարկում են կազմակերպել, բայց բացարձակ խոսք չկա, թե ինչ սխալների մասին է խոսքը: Մինչդեռ ակտում հստակ մատնանշված են բոլոր խախտումները՝ բացառությամբ գրադարանի գրքերի ոչնչացման հետ կապված հարցից, որին ես հետևողական եմ լինելու, որ Մինասյանը պատասխանատվության ենթարկվի*»:

Իսկ Հ. Խորիկյյանը 25.09.2017թ.-ին «armtimes.com» կայքի հրապարակման մեջ բուհի գիտխորհրդի 99 տոկոսին անվանել է կամակատարներ և նշել, որ գիտխորհրդում մտավորականություն գոյություն չունի. բոլորն իրենց անձնական շահերի հետևից են ընկած, (բառացի մեջբերվում է) «*Նրա այդ որոշումը ոչ մի իրավական հիմք չունի: Ես պատմության եւ փիլիսոփայության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար եմ մինչեւ նոյեմբերի կեսերը՝ ռեկտորի հրամանով: Այսինքն, ես գիտխորհրդի կողմից ընտրված չէի, որ գիտխորհուրդն էլ իմ նկատմամբ անվստահություն հայտներ: Պատճառն այն է, որ իբր ես խաթարում եմ ֆակուլտետի բարոյահոգեբանական անդորրը: Ասում են, թե*

գիտխորհուրդը որոշել է, որ պետք է ուսանողներից, աշխատակիցներից ճշտումներ անենք Ձեր մասին, բայց այս պահին ի աջակցություն ինձ ուսանողները ստորագրահավաք են կազմակերպել: Սա հապշտապ որոշում էր, իսկ գիտխորհրդի անդամների 99 տոկոսը կամակատարներ են: Այնտեղ մտավորականություն գոյություն չունի, բոլորը իրենց անձնական շահերի հետեւից են ընկած, եւ բնական է, որ պետք է կողմ լինեին, որ ստուգումներ անցկացվեր»:

Էթիկայի հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ գրառումներում խախտվել են «Ազնվության» սկզբունքի 1.2.6., «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1., «Վստահության» սկզբունքի 1.6.2. և «Հարգանք այլոց նկատմամբ» սկզբունքի 1.5.2. կետերը:

2.3. Գ. Համբարյանը իր 31.01.2018թ.-ի գրառմամբ անդրադարձ է կատարում նաև բուհի հաշվապահությանը (http://www.slaq.am/arm/news/1226728), (բառացի մեջբերվում է) «*Հավել եմ, որ բուհի հաշվապահության լույսերը անջատվում են շատ ուշ, երբ գյումրեցիներից շատերը քնած են. պարոն առդիտոր-հաշվապահ Ռաֆֆին և իր ընկերուհիները օրնիբուն զբաղված են ֆինանսական կեղծիքներով՝ օրինականացնելով և մեղմելով ռեկտորի կողմից կազմակերպված ՇՊՀ-ի թալանը*»:

Հանձնաժողովի կարծիքով խախտվել են «Ազնվության» սկզբունքի 1.2.6., «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1., «Վստահության» սկզբունքի 1.6.2. և «Հարգանք այլոց նկատմամբ» սկզբունքի 1.5.2. կետերը:

2.4. Գ. Համբարյանը 23.12.2017թ.-ին իր ֆեյսբուքյան էջում կատարել է գրառում, որը հրապարակվել է «armday.am» կայքում (http://armday.am/?p=34781&l=am%2Fshiraki+pethamalsarani+rektory+sparnum+e+), (բառացի մեջբերվում է) «*Ի դեպ, վերջերս նաև իմացա, որ Սահակ Մինասյանը ցանկանում է ինձ վերացնել...Այո, հենց այդպես...21-րդ դարում Հայաստանում, բուհի ռեկտորը, ով բանավիճել չգիտի և իրեն մտավորական է երևակայել, պարզվում է թաքնված մարդասպան է...Հետաքրքիր է, սրա թիկունքում կանգնած որոշ գործիչները տեղյակ են, որ իրենց հովանավորյալ "ինտելիգենտ" Սահակ Մինասյանը գյումրվա "Սահակ բեն Լադենն է...": Բացի կրթական ոլորտի "Կոլումբոսից", ում նորամուծությունները տարրական հանցագործություններ էին բարձրագույն կրթության նկատմամբ, բացի նրանից, որ նաև "դավադրությունների տեսության" սիրահար է, հիմա էլ պարզվեց, որ ահաբեկիչ-մարդասպան է... Հետաքրքիր է, Հայաստանում էլ ո՞ր բուհի ռեկտորը կարող է այսպիսի նախասիրություններ ունենալ... Ի դեպ, պարոն Մինասյանի ագրեսիվ ժրությունը պայմանավորված է նրանով, որ վերջինս և իր շրջապատը հպարտորեն աջուձախ հայտարարում են, որ "Մինասյանն իր հարցերը լուծել է Լյովի հետ..." Չհասկացողների համար պարզաբանեմ, որ Լյովը՝ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանն է, ում հետ "մտերիմ" հարաբերությունները չի հերքել նաև ՇՊՀ-ի ռեկտորը... Հ.Գ. Ափսոս, որ "Իսլամական պետություն" ահաբեկչական կազմակերպությունը գրեթե վերացվել է, թե չէ պատկերացնում եմ, թե ինչ ռազմական օպերացիաներ կղեկավարեր գյումրվա բեն-Լադենը Սիրիայում, Իրաքում կամ Լիբիայում...Մնում է բավարարվել Գյումրիով և զբաղվել իմ վերացման օպերացիան կազմակերպելով կամ պատվիրելով...Սա հումոր չէ...Սա բավական լուրջ է...*»:

Հանձնաժողովի կարծիքով վերոնշյալ հրապարակումն ակնհայտ սուտ մեղադրանք է, եթե ոչ, ապա Գ.Համբարյանն իր «մտավախության» մասին կհայտներ իրավապահ մարմիններին: Իսկ բուհի ղեկավարին ահաբեկիչ-մարդասպանի հետ նույնացնելը, մեր համոզմամբ, լուրջ վարկաբեկման սպառնալիք է բուհի հեղինակությանը: Նման անհիմն հայտարարությունները վարկաբեկում են բուհը:

Հանձնաժողովը գտնում է, որ նշյալ գրառմամբ Գ. Համբարյանը խախտել է «Ազնվության» սկզբունքի 1.2.6., «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1., «Վստահության» սկզբունքի 1.6.2. և «Հարգանք այլոց նկատմամբ» սկզբունքի 1.5.2. կետերը:

2.5. Գ. Համբարյանն իր 21.02.2018թ.-ին «asekose.am» կայքում հրապարակված նյութում «անվստահություն» է հայտնել ԿԳ նախարարին, վերջինիս մեղադրել է կաշառված կամ անգրագետ լինելու մեջ՝ (http://asekose.am/hy_AM/news/8/261896-amot-eleon-mkrtcyani-hertakan-xaytarak-oyinbazoutyoune.html), (բառացի մեջբերվում է) *«Պարոն նախարար, Դուք նույնիսկ Ձեր վկայակոչած կանոնադրության կետը չեք հասկանում, որը որևէ տարակարծության տեղիք չի տալիս: Հավելեմ, որ կանոնադրության մեջ նույնիսկ կետադրական նշանի փոփոխությունը պետք է հաստատվի կառավարության կողմից և նոր ուժի մեջ մտնի... Սակայն կրթական գործի Կոլումբոս ՇՊՀ ռեկտորը փետրվարի 12-ի գիտխորհրդում 13 փոփոխություններ է մտցրել բուհի կանոնադրության մեջ և բոպեներ անց դրանց հիման վրա անցկացրել դեկանների և ամբիոնների վարիչների ընտրություն...: ԿԳ նախարարության պատասխանը շատ թույլ էր և թերի, ես կասեի, որ այդ պատասխանով Լևոն Մկրտչյանը ոչ միայն խայտառակեց իրեն, այլ նաև իր ղեկավարած գերատեսչությունը...*

Առաջին իսկ օրվանից էր պարզ հինգ անգամ ԿԳ նախարարի պաշտոնը զբաղեցնող Լևոն Մկրտչյանի կաշկանդվածությունը՝ կապված իրեն «մեր Լյովը» անվանող Սահակ Մինասյանի նկատմամբ...

ԿԳ նախարարության այս պատասխանից երկու ենթադրություն կարելի է անել.

1. նախընտրելի հոդվածները մեջբերելով՝ մեր բողոքն անուղղակիորեն հաստատեցիք և անտեսելով ոչ նախընտրելի հոդվածները Լևոն Մկրտչյանը տարրական ապացուցում է, որ կաշառված է Սահակ Մինասյանի կողմից և կատարում է նրա պատվերները...

2. այսպիսի պատասխանով ԿԳ նախարարը ապացուցեց, որ բացարձակ տեղյակ չէ ՇՊՀ կանոնադրությունից և անգրագետ է...

Հ.Գ. Ստանալով այսպիսի թերի՝անգրագետ պատասխան, մենք կրկին պահանջում ենք բեկանել 2018 թ-ի փետրվարի 13-ին գիտխորհրդի կողմից կազմակերպված դեկանների և ամբիոնների վարիչների ընտրությունը, քանի որ դրանք անցկացվել են բուհի կանոնադրության կոպիտ խախտումով... Կրկնում ենք ԿԳ նախարար Լ.Մկրտչյանի և իր յուրայինների համար...Սահակ Միանսյանը խախտել է բուհի կանոնադրության նախարարության կողմից մեջբերված կետերը և չնշված 98 հոդվածի 3-րդ կետը...

Պարոն Մկրտչյան, ամոթ է... Գոնե մի՛ դարձեք ծիծաղի առարկա...

Այս պատասխանից հետո մենք անվստահություն ենք հայտնում ԿԳ նախարարին և

խնդրում ենք ՀՀ նախագահին և վարչապետին իրենց վերահսկողության տակ վերցնել ՇՊՀ-ի հետ կապված խնդիրները...»:

Հանձնաժողովը գտնում է, որ վերը նշված գրառման մեջ Գ.Համբարյանը խախտել է «Ազնվության» սկզբունքի 1.2.6., «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1., «Վստահության» սկզբունքի 1.6.2. և «Հարգանք այլոց նկատմամբ» սկզբունքի 1.5.2. կետերը:

2.6. Գ. Համբարյանը 26.02.2018թ.-ին «tert.am» կայքին տված հարցազրույցում անդրադարձել է էթիկայի հանձնաժողովին (http://www.tert.am/am/news/2018/02/26/Shph/2624194), (բառացի մեջբերվում է) «*Եվ արդեն նախնական ես գիտեմ՝ այդ 5 հոգանոց հանձնաժողովն ինչ եզրակացություն է տալու: Նախ, այդ հանձնաժողովի անդամների մեծ մասին ես չեմ բարևում: Շատ հետաքրքիր է, որ այդ հանձնաժողովն է ձևավորվել, այսինքն՝ արդեն կանխավ կարելի է իմանալ՝ իրենք ում պատվերն են կատարելու*»:

Հանձնաժողովը գտնում է, որ անընդունելի է Գ. Համբարյանի սուբյեկտիվ վերաբերմունքը ձևավորված հանձնաժողովի նկատմամբ: Միայն այն, որ Համբարյանը չի բարևում հանձնաժողովի անդամների մեծ մասին, արդեն իսկ խոսուն փաստ է և պարսավելի քայլ: Հանձնաժողովը գտնում է, որ Գ.Համբարյանը վերոնշյալ հարցազրույցում խախտել է «Վստահության» սկզբունքի 1.6.2. և «Հարգանք այլոց նկատմամբ» սկզբունքի 1.5.2. կետերը:

3. Գ. Համբարյանը և Հ. Խորիկյանը իրենց արարքներում չեն պահպանել մտավորականին հարիր պահվածք, իրենց գործողություններով խաթարել և խաթարում են բուհում բարոյահոգեբանական մթնոլորտը՝ վարկաբեկելով բուհը, վնաս պատճառելով կրթությանն աջակցող անհրաժեշտ միջավայրի ձևավորմանը:

3.1. Գ. Համբարյանը իր ֆեյբուքան էջում 27.10.2017թ.-ին կատարած գրառման մեջ «https://www.facebook.com/gagik.hambaryan/posts/1519324284818182» Շիրակի պետական համալսարանը նույնացնում է առևտրային կազմակերպության հետ, (բառացի մեջբերվում է) «*Այնպիսի տպավորություն է, որ Շիրակի պետհամալսարանը ոչ թե ուսումնական հաստատություն է, այլ առևտրային կազմակերպություն...*»:

Հանձնաժողովը գտնում է, որ Գ. Համբարյանի նման համեմատությունը անվանարկում է բուհի հեղինակությունը:

3.2. 2018 թվականի փետրվարի 14-ին «aysor.am»-ի հետ զրույցում (https://www.aysor.am/am/news/2018/02/14/%D4%B3%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AF%D5%80%D5%A1%D5%B4%D5%A2%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6/1375202) Գ. Համբարյանը ռեկտորին անվանել է «բեսպրեդելշիկ», (բառացի մեջբերվում է) «*Պարոն նախարարը ժպիտը դեմքին երեկ Պետական համալսարանում պարգևներ էր հանձնում ուսանողներին, այն դեպքում, երբ Շիրակի պետական համալսարանում իր ընկերը բացահայտ անօրինակություններ է իրականացնում: Նախարարությունը մինչև հիմա լռում է, այսինքն՝ ռեկտորի բոլոր «բեսպրեդելությունների» թեմայով մենք անընդհատ պետք է նամակներ գրենք նախագահին ու վարչապետին: 2015 թվականի սեպտեմբերի 27-ին մեր բարձրացրած աղմուկից հետո պարոն նախարարը եկավ և ոտքի վրա բեկանեց ռեկտորի ընդունած հակաօրինական բազմաթիվ որոշումներ: Ի՞նչ է, ամեն անգամ պետք է նախագահին դիմենք, որպեսզի նախագահականից էլ նախարարին պարտադրեն, որ կարգի հրավիրի՞ իր «բեսպրեդելշիկ» ընկերոջը*»:

Հանձնաժողովը գտնում է, որ նման խառնալեզու (ժարգոն) բառապաշարի օգտագործումը մտավորականի կողմից անընդունելի է, և վերևում բերված մեջբերումներում թույլ տրված անձնական բազմաթիվ վիրավորական պիտակավորումներն ու անհարիր բնորոշումներն անհամատեղելի են մտավորական-դասախոսի կերպարին:

Հիմք ընդունելով վերևում շարադրվածը՝ էթիկայի հանձնաժողովը հանգում է հետևյալին՝

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Էթիկային հանձնաժողովը ստեղծվել է 12.02.2018թ.-ի ՇՊՀ գիտական խորհրդի նիստում ՇՊՀ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի առաջարկության հիման վրա:

Եզրակացության համար հիմք են հանդիսացել վերոգրյալ հրապարակումները, ինչպես նաև ՇՊՀ-ի վերջին գիտխորհուրդների (25.09.2017թ., 12.02.2018թ.) և հատկապես 23.02.2018թ.-ի նիստում ներքոհիշյալ ելույթները: Վերջին նիստում գիտխորհրդի անդամների մեծամասնությունը արտահայտել է իր կարծիքը բուհում ստեղծված իրավիճակի մասին:

ՇՊՀ արեստակցական կազմակերպության նախագահ Վ. Խաչատրյանը նշել է, որ *«ես պետք է խնդրեմ այստեղից դուրս չգալ մինչ վերջնական որոշում կայացնելը: Այլևս հնարավոր չէ այս լարված մթնոլորտում աշխատել, ու՞մ է ձեռնտու այս վիճակը: Մեր բոլոր հորդորները հաշվի չեն առնվում. ընդունենք, որ նրանք լավ գիտնականներ են, լավ դասախոսներ, բայց ինչքա՞ն կարելի է ոտնահարել մարդկանց իրավունքներն ու արժանապատվությունը: Ինչքա՞ն կարելի է հանդուրժել, որ ստահոդ լուրերով դաստիարակենք մեր ուսանողներին: Սեպտեմբերին մենք կիմանանք այս ամենի արդյունքը, երբ դիմորդների քանակը մեր բուհում կտրուկ կնվազի»:*

Պարոն Խաչատրյանը նշեց, որ երբ ինքը զրուցում է ուսանողների հետ, լսում է, թե նրանք ինչեր են ասում, որ լսել են Խորիկյանից կամ Համբարյանից: Պարոն Խաչատրյանը հարց բարձրացրեց, թե ինչքան պետք է հանդուրժեն մի ողջ հանրույթի արժանապատվության ոտնահարումը:

ՇՊՀ գիտական խորհրդի մեկ այլ անդամ՝ Լ.Հակոբյանը, նշեց, *որ իր հայրը մի ամբողջ կյանք աշխատել է այս բուհում, ինքն էլ արդեն մոտ տասը տարի ամբիոն է ղեկավարել, այդ ընթացքում բուհում բազում խնդիրներ են եղել, որոնք նաև չեն լուծվել, սակայն նման տիպի խնդիր երբևէ չի եղել: Տիկին Հակոբյանը նշեց, որ իրենք բոլորը իրենց աշխատանքն են կատարում, մեկը՝ լավ, մյուսը՝ մի փոքր պակաս, բայց այսպիսի անառողջ մթնոլորտում բոլորի աշխատանքը ջուրն է լցվում: Բուհում այդ երկուսի պատճառով անառողջ մթնոլորտ է ստեղծվել, և ուսանողներն էլ հոդվածներն են կարդում: Տիկին Հակոբյանը հարցականի տակ դրեց այն հանգամանքը, թե սեպտեմբերին դիմորդներ կլինե՞ն, թե՞ ոչ:*

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան Թ. Մելիքյանն էլ իր խոսքում նշել է՝ *նրանք ասել են, թե «պայքարելու են մինչև վերջ»: «Մեզանից*

յուրաքանչյուրը ճանապարհ է անցել, ընտանիք ունի, ինչու՞ մենք պիտի կարդանք այդ լուտանքները: Այս վեճը հասել է այն աստիճանի, որ վիրավորում են բոլորին՝ ԿԳ նախարարին, վարչապետին, ՇՊՀ-ի Հոգաբարձուների և Գիտական խորհուրդներին, նաև ռեկտորին: Ուսանողին ի՞նչ է հետաքրքրում, թե ով է ընտրում ֆակուլտետի դեկանին՝ ֆակուլտետային խորհուրդը, թե՞ գիտական խորհուրդը: Մասնակից են դարձրել այս գործին նաև ուսանողներին: Եվ մենք, դեկավար մարմին լինելով, պարտավոր ենք որոշում ընդունել, քանի որ ստիպված ենք եղել այսքան ժամանակ նրանց հանդուրժելու»:

Թ. Մելիքյանի կարծիքով, մեր համալսարանի նկատմամբ դրսում ձևավորվել է անլուրջ վերաբերմունք:

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան Օֆելյա Հովհաննիսյանը նկատել է, *որ ուսանողամետ և ուսանողակենտրոն գործունեություն տարփողելով՝ պատմության ամբիոնի վարիչի ԺՊ Հովհ. Խորիկյանը չի ստորագրում մանդատային հանձնաժողովի այն նիստի արձանագրությունը, որով ամրագրվել են այս կիսամյակում առկա համակարգում ուսանողների վարձավճարների զեղչերը: Բայց նույն ուսանողներին դրդելով՝ դարձրել էին դասադուլի ակամա մասնակիցներ՝ հարց բարձրացնելով նաև զեղչային համակարգի մասին, կամ, նույն ուսանողներին դարձնելով պահանջատերեր, չէին կարծում, որ վերջիններս անգամ սկսելու են պայքարել նաև իրենց ամբիոնի դասախոսների դեմ: Փաստն այն է, որ դասախոսի կողմից արված վրիպակի պատճառով ուսանողները դրսևորել էին ավելորդ պահանջկոտություն և ագրեսիվ վարք: Կարելի՞ է արդյոք այս կերպ ազդել ուսանողի հոգեբանության վրա:*

Օֆելյա Հովհաննիսյանը նշեց նաև, որ ֆակուլտետում տիրող լարվածությունն ազդելու է նաև դիմորդների ներգրավման վրա: Որպես փաստ՝ վերջին շրջանում ֆակուլտետի բաժիններից դիմորդների խուսափելը:

Ավելացվեց, որ դասադուլի օրերին չեն կարողացել պատասխանել ծնողների այն հարցին, թե այդ ամենը երբ է ավարտվելու: Ֆակուլտետի լարվածությունը գուցե նրանց կողմից դրսևորված անտարբերության արդյունք է, և ինչու՞, մինչև ե՞րբ պիտի տեղի ունենա այս ամենը:

Մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյանի կարծիքով *հանրույթը մեծ ընտանիք է, և տիրող իրավիճակն ազդում է բոլորի վրա, կոիվներն ազդում են բոլորի աշխատանքի վրա: Ինքը մտահոգ է՝ ձևավորվել է անվստահության մթնոլորտ, մարդիկ չեն վստահում իրար, և ոչ ոք չէր ուզում, որ այդպես լիներ: Սա հարցի մի կողմն է: Մյուս կողմն այն է, որ յուրաքանչյուր կոնֆլիկտ հանրույթի համար շատ դրական նշանակություն պիտի ունենա, եթե կոնստրուկտիվ լուծում է տրվում:*

Հավելենք նաև, որ Գ. Համբարյանը և Հ. Խորիկյանը ոչ մի անգամ որևէ փաստաթուղթ ստանալու համար չեն դիմել բուհի ղեկավարությանը. փաստաթղթերը ձեռք են բերել ոչ պաշտոնական եղանակով:

Բոլոր դեպքերում, երբ նրանք, դիմելով պատկան մարմիններին, ստացել են իրենց դիմումի պատասխանը, որը չի համապատասխանել իրենց ակնկալած պատասխանին, սկսել են անվանարկել նաև այդ մարմինը:

Չնայած էթիկայի հանձնաժողովի հասցեին նախապես ուղղված սպառնալիքներին և պիտակավորումներին՝ հանձնաժողովը բազմիցս փորձեց համագործակցել Խորիկյանի և Համբարյանի հետ՝ համապատասխան բացատրություններ ստանալու նպատակով, սակայն նրանք համառորեն հրաժարվեցին՝ ընտրելով թելադրանքի ուղին: Ավելին՝ երբ հանձնաժողովը փորձեց մեկնաբանություններն բացատրություններ պահանջել վերոգրյալի մասին, հակառակ բարեվարքության սկզբունքին՝ Գ. Համբարյանը պատռեց հանձնաժողովի գրությունը, իսկ Հ. Խորիկյանը հրաժարվեց այն ստանալուց: Հիշյալ պահվածքը հանձնաժողովին ստիպում է մտածել, որ Համբարյանի և Խորիկյանի մոտեցումները հետապնդում են անձնական շահ և սուբյեկտիվ վերաբերմունք:

Էթիկայի հանձնաժողովը գտնում է, որ Հ. Խորիկյանի և Գ. Համբարյանի վարքագիծը ստեղծված իրավիճակում իր բացասական հետևանքներով բուհի համար վնասաբեր է և խարխլում է բարոյահոգեբանական մթնոլորտը բուհում, արատավորում է հաստատության վարկանիշը, և ի վերջո տուժում են բուհի շահառուները:

Հանձնաժողովը համակարծիք է գիտական խորհրդի այն որոշմանը, որի համաձայն՝ Հ. Խորիկյանի և Գ. Համբարյանի պահվածքն այլևս վստահություն չի ներշնչում և անհամատեղելի է դասախոսի աշխատանքին:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված նյութերը ողջամիտ հիմքեր են էթիկայի նորմերի խախտման փաստ արձանագրելու համար:

2. Շիրակի պետական համալսարանի «Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի» «Պատմության և փիլիսոփայության» ամբիոնի վարիչի ԺՊ, դոցենտ Հովհաննես Գեորգիի Խորիկյանը և նույն ամբիոնի դասախոս Գագիկ Լևոնի Համբարյանը խախտել են ՇՊՀ գիտական խորհրդի կողմից 30.01.2017թ.-ի նիստում հաստատված «Էթիկայի սկզբունքներով» սահմանված «Ազնվության» սկզբունքի 1.2.6, «Ճշմարտացիության» սկզբունքի 1.3.1, «Այլոց նկատմամբ հարգանք» սկզբունքի 1.5.2. և «Վստահության» սկզբունքի 1.6.2 կետերը:

Հանձնաժողովի
նախագահ՝ Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Քարտուղար՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Անդամներ՝ Ե.ՍԵՐՈԲՅԱՆ

Լ.ՀԱԿՈԲՅԱՆ

Ա.ՉԱՐՉՈՂԼՅԱՆ